# ՋՈՒԱՐՃԱԼԻՔ

*Ռուսիոյ կայսերական ազգատոհմին ցեղագա-
նոցիւնը :*

( Կրօնքը · Յունադաւան , բայց անկախ Կոստանդնուպոլսոյ պատրիարքէն , և եկեղեցւոյն գլուխը նոյն ինքն կայսրն է)

ՆԻԿՈՂԱՅՈՍ Ա փավլովիչ կայսր բովանդակ Ռուսիոյ և Թագաւոր Լեհաց , որն որ ծնած է 1796 Յուլիսի 6ին · յաջորդեց իր եղբօրը Աղեքսանդր կայսեր ( ծնած 1777 Դեկտեմբերի 12ին ) 1825 Դեկտ · 1ին · զօրութեամբ յայտարարութեան · 1823 Օգոստոսի 28ին · որով իր եղբայրը Կոստանդին մեծ դուքսը կայսրութեան իրաւունքէն հրաժարեցաւ · կայսր պսակուեցաւ 1826 Սեպտ · 3ին Մոսկուայի մէջ , և 1829 Մայիսի 24ին ալ Վարսաւիայի մէջ իբրև Թագաւոր Լեհաց : Ամուսնացաւ 1817 Յուլիսի 13ին

Աղեքսանդրա—փրեդերիկովնա—փրեդերիկա—Լուիզա—Շարլոթ—Վիլհելմին հետ , որն որ փրեդերիկոս Գ Բրուսիոյ նախընթաց թագաւորին դուստրն է , և հիմակուանին քոյրը · ծնած Յուլ · 13 , 1798ին :

ՈՐԴԻՔԸ · Ա · Աղեքսանդր Նիքոլայեվիչ Կեսարեվիչ ժառանգական մեծ դուքս · 1818 Ապր · 29ին ծնած · զինուորական պաշտօններու մէջ է , և այլ և այլ գունդերու հրամանատար · ամուսնացաւ 1841 Ապր · 28ին Մարիամ—Կեսարեվնա—Աղեքսանդրովնա մեծ դքսուհւոյն հետ , որն որ ծնած է 1824 Օգոստ · 8ին · և է դուստր Լուդովիկոս Բ , Հեսի մեռած մեծ դքսին : — Չորս որդի ունեցան , որոնցմէ առջինը կը կոչուի Նիկողայոս Աղեքսանդրեվիչ 1843 Սեպտ · 20 ծնած : — 2 · Աղեքսանդըր Աղեքսանդրեվիչ 1845 Մարտի 10ին ծնած : — 3 · Վլատիմիր Աղեքսանդրեվիչ 1847 Ապր · 22 : — 4 · Աղեքսիս Աղեքսանդրեվիչ 1850 Յնվրի · 14ին ծնած :

Բ · Մարիամ Նիքոլայեվնա մեծ դքսուհի · 1819 Օգոստ · 18ին ծնած · ամուսնացաւ 1839 Յուլ · 14 ին Մաքսիմիլիանոս Լեւթենպերկի դքսին հետ , որ քիչ ատեն է որ մեռաւ :

Գ · Օլկա Նիքոլայեվնա մեծ դքսուհի 1822 Սեպտ · 11ին ծնաւ · 1846 Յուլ · 13ին ամուսնացաւ Վիւրթէնպէրկի Կարոլոս Թագաւորազուն իշխանին հետ :

Դ · Կոստանդին Նիքոլայեվիչ մեծ դուքս · 1827 Սեպտ · 21ին ծնաւ · շատ տեսակ զինուորական պաշտօններ ունի · ասիկայ կարգուեցաւ 1848 Սեպտ 11ին Աղեքսանդրա Յօզէֆովնա դքսուհւոյն հետ · ծնած 1830 Յուլիսի 20ին · դուստր Սաքս Ալթէնպուրկի Յովսէփ դքսին : Երկու որդի ունեցան , մէկը կը կոչուի Նիկողայոս Կոստանդինովիչ 1850 փետր · 14ին ծնած · 2 Օլկա Կոստանդինովնա մեծ դքսուհի 1851 Սեպտ · 3ին ծնած :

Ե · Նիկողայոս Նիքոլայեվիչ մեծ դուքս · 1831 Օգոստ · 8ին ծնած ; դեռ կարգուած չէ · զինուորական պաշտօններու մէջ է :

Զ · Միքայէլ Նիքոլայեվիչ մեծ դուքս · 1832 Հոկտ · 25ին ծնած :

ԿԱՅՍԵՐ ԵՂԲԱՐՑՆ ՈՒ ՔՈՅՐԵՐԸ · Ա · Մարիամ Փաւլովնա մեծ դքսուհի իշխանուհի Սաքս Վէյմարի , Բ Աննա Փաւլովնա Գուլիէլմոս Բ · Սատրին Նահանգաց Թագաւորէն այրի մնացած 1849 Մարտի 17ին :

Նիկողայոս իրեք եղբայր ունէր , որոնց երկուքը Աղեքսանդր և Կոստանդին անորդի մեռան · չորրորդ եղբայրը որ իրմէ պզտիկն էր՝ կը կոչուէր Միքայէլ Փաւլովիչ 1798 փետր · 8ին ծնած , և մեռաւ 1849 Սեպտ 9ին · իր ամուսինը Վիւրթէնպէրկի արքի Թագաւորող իշխանին քոյրն է , և կը կոչուի Հեղինէ Փաւլովնա 1807 Յնվ · 9ին ծնած · և ամուսնացած 1824 փետր · 19ին : Միայն դուստր մը ունի Կատարինէ Միքայիլովնա անունով 1827 Օգոստ 28ին ծնած · և կարգուեցաւ 1851 փետր · 16ին Գէորգ Մէքլէնպուրկ Շթրէլիցի դքսին հետ :